



Ա.Դ.ԶԵԽՈՎ

# ՋԻՆԻ ԱԶԳԱՆԻՒՅԹ

891.71.5.  
9-34

2011-05

891.715

9-34 ✓

Ա. Պ. ԶԵԽՈՎ

# ԶԻՍԻ ԱԶԳԱՆՈՒՆ

ՆԿԱՐՆԵՐԸ Ս. ԲՈՈՒՄԻ

ՀԻ

ԹԵՏՐԱՑ  
ՀԼԿՑԵՄ ԿԻՑ ՄԱՆԿՈՎԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՈՒԺ  
ՅԵՐԵՎԱՆ  
1938

Պաշտոնաթող գեներալ մայոր Բուլղեեի ատամները  
ցավեցին։ Նա վողողում եր բերանը ողիտով, կոնյակով,  
հիվանդ ատամի վրա ծխախոտի մուր, ափիոն, բնեկն,  
նավթ եր դնում, այտին լող եր քսում, ականջների  
մեջ սպիրտով թրջած բամբակ եր դնում, բաց արդ  
բոլոր կամ չելին ոգնում, կամ սիրտն եր խառնում դրան-  
ցից, Յեկավ բժիշկը։ Նա փորփրեց ատամը, խինին նշանա-  
կեց, բաց արդ ել չոգնեց։ Յերբ առաջարկեցին հանել  
հիվանդ ատամը, զեներալը չհամաձայնվեց։ Բոլոր տնե-  
ցիները — կինը, լեռեխաները, ծառաները, նույնիսկ խոհա-  
րարի աշկերտ Պետկան — լուրաքանչուրն իր միջոցն եր  
առաջարկում, իմիջիալոց Բուլղեեի գործակատարը, Իվան  
Յեկուիչը, լեկավ նրա մոտ և խորհուրդ տվեց բժշկվել  
կախարդանքով։

— Ալստեղ, մեր գավառում, ձերդ գերազանցություն, —  
ասաց նա, — մի տաս տարի սրանից առաջ ծառակում եր  
ակցիզնի Յակով Վասիլիչը։ Նա այնպես եր կախարդում  
ատամները, վոր ել չեղած։ Տեսար, շուռ լեկավ գեպի  
լուսամուտը, փսփսաց, թքեց և ցավի հետքն ել չերեվաց։  
— Ալպիսի մի գորություն ե տրված նրան։

— Իսկ վորտեղ ե նա հիմա։

Ակցիզնիությունից հանելուց հետո նա Սարատովում,  
գոքանչի մոտ ե ապրում։ Հիսա հենց ատամներով ե,  
վոր զլուխ ե պահում։ Մի վորեիցե մարդու ատամը վոր  
ցավեց, տեսար զնացին նրա մոտ, նա ել ոգնում ե...



1293

38

իրենց, սարատովզիներին, իր տանն և՝ ընդունում, իսկ ուրիշ քաղաքներից հեռագրով են իմաց՝ տալիս։ Ուղարկեք նրան մի հեռագիր, ձերդ գերազանցություն, վոր հապա, այսպես ու այսպես... աստծու ծառա Ալեքսիլ ատամը ցալում ե, խնդրում եմ բժշկություն անել։ Իսկ բժշկության փողը փոստով կուղարկեք։

— Դատարկ բան ե, խարերայություն ե։

— Իսկ դուք փորձեցք, ձերդ գերազանցություն։

Ողու համար մեռնում ե, ազրում ե զոչ թե իր կնկա, այլ մի գերմանունու հետ, լավ հայուանք գիտի, բայց կարելի լե ասել, հրաշագործ մի պարոն ե։

— Ուղարկիր, Ալբան, — աղաչեց գեներալի՝ կինը։ — Այ, դու կախարդանքին չես հավատում, իսկ լես հենց ինձ վրա յեմ փորձել։ Զնայած դու չես ել հավատում, բայց ախրը ինչու չուղարկենք։ Հո ձեռքներս չեն թուլանա դրանից։

— Դե լավ, — համաձայնվեց Բուլդենը։ Այս դրության մեջ զոչ թե միայն ակախուն, հենց իրեն, սատանաին ել հեռաղիր կուղարկես... վայէ ել ուժ չունեմ։ Հը՛, զորտեղ ե ազրում քո ակցիզնին։ Ինչպես պիտի գրել նրան։

Գեներալը նստեց սեղանի մոտ և գրիշը վերցրեց ձեռքը։

— Նրան Սարատովում ամեն մի շուն ել ճանաչում ե, ասաց գործակատարը։ — Բարեհաճեք գրել, ձերդ գերազանցություն, քաղաք Սարատով, ուրեմն... նորին բարեհաճության պարոն Յակով Վասիլիչ... Վասիլիչ։

— Հը՛։

— Վասիլիչ... Յակով Վասիլիչ... իսկ ազգանունը... իսկ ազգանունը... Մոռացել եմ։ Վասիլիչ... Սատանան տանի... Ախրը վմաց ե նրա ազգանունը։ Մի քիչ առաջ, վոր արստեղ ելի գալիս, միտս եր... Թուլ տվեք... .

Իվան Յեփսելիչն աչքերը բարձրացրեց գեղի առաստաղն



Պատմաբարող գեներալ-մայոր Բուլդենի ատամները ցավեցին։

շրթունքները շարժեց։ Բուլղենն ու կինը անհամբեր  
սպասում եյին։

— Հը, ինչ լեղավ։ Դե շնւտ մտածիր։

— Այս ըստելիս... Վասիլիչ... Յակով Վասիլիչ...

Մոռացա։ Այսպես մի հաստրակ ազգանուն ե վոր...  
կարծես թե ձիու ազգանուն լինի... Կորիլին, չե, Կորիլին  
չի։ Սպասեցեք... Ժերեբցով, գուցե։ Զե, Ժերեբցով ել  
չի։ Հիշում եմ ձիու ազգանուն ե, իսկ ինչ ազգանուն ե,  
մաքից ընկել ե...»

— Ժերեբցանի կով։

— Չե, սպասեցեք... Կորիլիցին, Կորիլատնիկով...  
Կորելյով..

— Վերջինն ալդեն շան ազգանուն եր, և վոչ ձիու։  
Ժերեբչիկով։

— Չե, Ժերեբչիկով ել չի... Լոշադինին... Լոշակով...

Ժերեբկին... Իսկի մեկն ել չի։

— Դե, լով. բա վճնց պիտի գըեմ։

Մի մեկ ել մտածիր։

— Այս ըստելիս Լոշադկին... Կորիլկին... Կորեննով...

— Կորեննիկով, — հարցրեց դեներալի կինը։

— Չե, չե։ Պրիսալաժկին։ Չե, ալդ ել չի։ Մոռացա։

— Վոր ալդպես ե, սատանան տանի քեզ, ել ինչնու  
իս խցկում քո խորհուրդներով, լեթե մոռացել ես, —  
բարկացավ գեներալը։ — Իե, Կորիր ալստեղից։

Իսան Յեգանիշը զանդաղ գուրս լեկավ, իսկ գե-  
ներալը թուշը բռնեց և սկսեց սենյակում լետ ու առաջ  
գնալ։

— Վա՞յ, աստված իմ, — գոչում եր նա։ — Վա՞յ, մերիկ՝  
վամի, աշխարհը մթնեց գլխիս։

Գործակատարը գուրսէնեկավ ալգի ե, աչքերը դեպի  
լերկինք բարձրացնելով, լսկսեց մտարերել ակցիզնու  
ազգանունը։



Բարեհանել գրել, ձերդ զերազանցուրյան, Տաղավ Սարասով, ու-  
նեմ։

— Ժերեբչիկով... Ժերեբկովսկի... Ժերեբենկու  
ԶԵ, ալդ չի: Լուաղինւկի... Լուաղեղիչ... ԺԵԼԵՐԿՈՎԻՉ...  
Կոբիլանսկի...

Մի քիչ հետո նրան կանչեցին պարոնների մոտ:  
— Հիշեցիր, — հարցրեց զեւերալը:  
— ԶԵ, ձերդ գերազանցութուն:  
— Գուցե, կոնյակովսկի: Լուաղնիկով, չԵ՞: Յեվ տանը  
բոլորն իրար լետեից սկսեցին ազգանուններ հնարելը  
Քրքրեցին ձիերի բոլոր հասակները, սեռելը և ցեղերը,  
հիշեցին բաշը, սմբակները, ձիասարը... Տանը, ալդում,  
ծառաների սենյակում և խոհանոցում մարդիկ ման ելին  
գալիս անկյունից անկյուն և, ճակատները քորելով  
ազգանուն ելին փորոնում...

Գործակատարին անընդհատ կանչում ելին տուն:  
— Տարօւնով, — հարցնում եյին նրան: — Կոպիտին,  
Ժերեբռովսկի:

— ԶԵ, չԵ, — պատասխանում եր Իվան Յեվսելիչը և,  
աչքերը վերև բարձրացրած, շարունակում եր մտածել  
բարձրածայն, — կոնյանկո... կոնչենկո... Ժերեբենե... Կոբի-  
լեն...

— Հայրիկ, — բղավում ելին լերեխաների սենյակից:  
— Տընկին, Ուղղեշկին:

Ամբողջ ազարակն իրար անցավ: Անհամբեր, տանջված  
գեներալը խոստացավ հինգ ոռորդի տալ նրան, ով կհիշի  
խոկական աղջանունը, և Իվան Յեվսելիչի լեռեցին սկսեցին  
ման գալ ամբողջ խմբերով...

— Գնենքով, — ասում ելին նրան: — Խիսլստի, Լոշա-  
ղիցկի:

Բայց լերեկոն վրա հասավ, իւկ ազդանունը դեռ չեք  
գտնվել: Հենց աղպես ել պառկեցին քնելու, առանց հեռա-  
զիր ուղարկելու: Գեներալը քնեց ամբողջ զի երը, ման  
եր գալիս անկյունից անկյուն և տնքում... զիշերվա



Յել տանն իրար յետելից սկսեցին ազգանուններ նեարել:

Ժամի լերկուսից անց եր, լերբ նա գուրս յեկավ տանից  
ու բաղսեց զործակատարի լուսածուտը:

— Մերինով հո չի, — հարցրեց նա լալկան ձանով:

— ԶԵ, Մերինով չի, ձերդ գերազանցութուն, — պատասխանեց Իվան Յեփսելիչն ու մեղավորի պես հառաչք:

— ԴԵ, գուցե, ազգանունը ձիու չի, այլ մի վորհեռ  
ուրիշ ազգանուն ե:

— Ճշարիտ խոսք, ձերդ գերազանցություն, ձիու  
ազգանուն ե... Յես շատ լավ եմ հիշում:

— Ինչ հիշողությունից գուրկ մարդ ես, ախաղեր ջան...  
Ինձ հանար ալժմ այդ ազգանունը, թվում ե, թե ամեն  
բանից ել թանկ ե աշխարհում: Տանջվեցի:

Առաջոտյան գեներալը նորից ուղարկեց բժշկի  
լետեից:

— Թող հանի, — վճռեց նա: — Ել ուժ չունեմ դիմա-  
նալու...

Յեկավ բժիշկը և հիվանդ ատամը հանեց: Յավն  
իսկուն հանդարտվեց և զեներալը հանդստացավ: Կա-  
տարելով իր զործը և ստանալով ինչ վոր պետք եր իր  
սշխատանքի համար, բժիշկը նստեց իր կառքն ու գնաց  
սուն: Դարպաններից գուրս, դաշտում նա հանդիպեց  
իվան Յեփսելիչին: Գործակատարը կանգնել եր ճանա-  
պարհի կողքին և, կենարոնացած նախելով իր վոտքերի  
տակը, ինչ վոր բանի մասին եր մտածում:

Նրա ճակատն ակոսող կնճիռներից և աչքերի արտա-  
հալուությունից լերեւմ եր, վոր նրա մտքերը լարված  
ելին և տանջալից...

— Բուլանով... Զերեզսեգինիկով..., — վնթվնթում  
եր նա: — Զասուպնին..., լոշագույնի...

— Իվան Յեփսելիչ, — դարձավ նրան բժիշկը: — ԶԵմ  
կարող արգլոք, սիրելիս, գնել քեզնից ոի հինգ քառորդ




— Գնեպօվ, — տում ելին նրան: — Որսի սի, Լուսդիցի:

Վարսակ։ Մեր գլուղացիներն ինձ վարսակ ծախում են,  
բայց շատ վատն ե։

Ի՞սկ Յեզսելիշը ապուշ կորած նաևց բժշկիոց ինչ  
զոր վայրենաբար ժպտաց և, առանց մի բան պատասխա-



293  
38



Դարպահից դուր, դատաւմ բժիշկը նանդիպեց Իվան Յեվսեյիշին...

Նելու, ձեռքերն իրար խփելով, վազեց գեղի ադարակն  
այնպիսի արագությամբ, վոր կարծես յետելցը կատաղած  
շուն և ընկել:

—Միտս ընկավ, ձերդ գերազանցություն,—գոշեց  
նա, անբնական ձայնով ուրախացած, —աստված առող-  
ջություն տա բժշկին, Ուսով. Ուսով և ակցիզնու աղքա-  
նոնք: Ուսով—ձերդ գերազանցություն: Ուղարկեցեք  
հեռագիրը Ուսովին:

—Առ քեզ, —ասաց զեներալը արհամարհանքով և  
նրան հայնուանշան ցուց տվեց: Հիւա քո ձիու ազգանունն  
ինձ պետք չի: Առ քեզ:



Պատ. Խմբագիր՝ Հ. Հայուսպետյան  
Տես խմբագիր՝ Ան Քասպարյան  
Սրբաւրիչ՝ Թ. Հովակիմյան  
Կոնտրոլ սբբ. Վ. Ավաղյան

Գլազիրի լիազոր Կ-4667. Հրատ 4352.

Պատվեր 1273. Տորած ս000.

Թուղթ 62×94 Տպադրակ ն 1 սամ.

Մեկ մամ 23 040 նիտ. Հեղինակային Ա4 մամ.

Հանձնված ե արտադրության 22 նոյեմբերի 1937 թ.

Ստորագրված ե տպագրության 14 փետրվարի 1938 թ.

Գինը 50 կոտ.

Գետնը 1-ըն տպարտն, Յերևան, Անընը փող. 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0387705

4365

ԳՐԱԸ 504

А.П.ЧЕХОВ  
Лошадиная фамилия  
ГИЗ. АРМ. ССР ЕРЕВАН